



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» «հունիսի» 2019 թ. № 196-ՉԿ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Նշանակել ծառայողական քննություն նախարարության կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության պետ Արթուր Պետրոսյանի կողմից 2019 թվականի ապրիլի 17-ին պետական եկամուտների կոմիտեից ստացված N 7-1/12490 գրությանն (մտից 41338) սահմանված ժամկետում ընթացք չտալու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) 2019 թվականի ապրիլի 17-ին պետական եկամուտների կոմիտեից ստացված N 7-1/12490 գրությանը սահմանված կարգով ընթացք չտալու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Նահրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,

3) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանը ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ